

Ճրագի տկի մուրը,
հաշիկ տարան քո բուրը:

15(671). ՀԱՐՍԻ ԵՎ ՓԵՍԱՅԻ ԳՈՎՔ

Բարով հասնեք ձեր մուրալին,
Գովամ հարսին, նորափեսին,
Ծլեք, ծաղկեք, աշխարհ անսնեք:
Նորահարսն նման լուսնակ
Աչքերն փայլուն արևոյան,
Բոյն նոճի, բարձր ու բարակ:

Նորափեսան նման բարդի,
Խելքն բնտիր իշխան մարդի,
Բացված, քան մայիսյան վարդի,
Գովամ հարսին, նորափեսին:

Նորահարսն անդին քար է,
Ու թանկագին զուտ զոհար է,
Այսպիսի ծախսին արժան էր,
Գովամ հարսին, նորափեսին:

Բաժակ ձեռին կայն քալոր,
Աստված անա շնախալոր,
Ծլեք, ծաղկեք հարս, թողտվոր,
Գովամ հարսին, նորափեսին:

Ո Ղ Բ Ե Ր Գ Ե Ր

1(674). ՄՈՐ ՈՂԲԸ ԶԱՎԱԿԻ ՎՐԱ

Անուշ քնով քնած բալա,
Հելի՛, քո յարն ա էկե,
Սարի զմրուխտ զուշ ես զուռե,
Հելի՛ բալա, յարդ ա էկե:

Հալվեցավ սարերի ձունը,
Սե լուրը բերին մեր տունը,
Կոտրվավ կոնքրս, կուռս,
Զարթնի, բալա՛, յարդ ա էկե:

Վեր կենամ շորերդ բերեմ,
Բերեմ ու զոշիկ դնեմ,
Սրտիս ցավը քե պատմեմ,
Զարթնի, բալա՛, մերդ ա էկե:

2(675).

Իմ բալես նշանլու ա,
Ժամ կտանեն, սլաակերիկ մատաղ,
էդ կոռնձ մաղերիկ զուրբան,
Ղալամբաշ հնքերիկ զուրբան,
Իմ նշանլու բալա ջան,
Կոտրած արևուտ զուրբան,
Անդուռ, անակուշկա սողարանքիկ զուրբան:

16(672). ՆՈՐԱՀԱՐՍԻ ԳՈՎՔ

Ասեք շնավո՛ր, ասեք շնավո՛ր,
Մեր նորախարսի շապիկ շնավո՛ր.
Ասեք շնավո՛ր, ասեք շնավո՛ր,
Մեր նորախարսի դեյրեն շնավո՛ր.
Ասեք շնավո՛ր, ասեք շնավո՛ր,
Մեր նորախարսի ռանամաններ շնավո՛ր.
Դու նորախարս էս, սլվան ծաղիկ էս,
Շաքրիյ քյալդդը Լս, մարալ-ջեյրան ես:

17(673).

Ասեք շնհավո՛ր, ասեք շնհավո՛ր,
Մեր նորահարսի շապիկ շնհավո՛ր.
Ասեք շնհավոր, ասեք շնհավոր,
Մեր նորախարսի դեյրան շնհավո՛ր,
Ասեք շնհավոր, ասեք շնհավոր,
Մեր նորահարսի սոլեր շնհավո՛ր.
Ասեք շնհավոր, ասեք շնհավոր,
Մեր նորախարսի բախտը շնհավո՛ր:
Դու նորահարս ես, մի իրենք ծաղիկ ես,
Շաքյարից քաղցր ես, մարալ-ջեյրան ես:

3(676). ԿՆՈՋ ՈՂԲԸ ԱՄՈՒՍՆՈՒ ՎՐԱ

Գլխավորի մախ ա, յամա՛ն, յաման,
Մանր րալեքդ անտեր են, մեռնեմ
դյարդանիդ.
Գրողի լուսը քոռնար, ումուտ ջան,
Քե չաաներ մեղնից, յամա՛ն, յամա՛ն:

4(677). Ո Ղ Բ

Քա յամա՛ն, յամա՛ն, մարդ ջան,
Իմա՛լ էնեմ, քու ձագեր իմա՛լ պախեմ,
Յամա՛ն, յամա՛ն,
Մննր կոտլուս, յաման, յամա՛ն,
Ճմեր մտյին յաման, յամա՛ն:

5(678). ԶԱՎԱԿԻ ՈՂԲԸ ՄՈՐ ՎՐԱ

Աղե՛ ջան, աղե՛ ջան, մերո՛ ջան,
Իմա՛լ էնեմ,
Իմ օսկե մաաներով մերո ջան,
Իմ աղե՛ ջան,
Իմ աանջված տրորված ծնող ջան,
Իմ աղե ջան,
Պարտական հեղիմ քեղ,
Իմա՛լ էնեմ, իմ քաղցր, խաղինա ջան,
Մերո ջան, իմ տղե ջան, իմ աղե ջան:

Գնա՛ նոր հարսանաց տունը,
Գեղեցիկ էր դարդարված դուլնով,
Կարեր ա իմ աչքի քաղցր քունը,
Գնա՛, մեր ջան, դնա ըտրով:
Ինձ թողել ես մորմոքալով,
Արտավելով, մղկտալով
Գնա՛, մեր ջան, դնա՛,
Բարիքները քե արժան ա,
Գնա, քաղցր մեր ջան, դնա ըտրով:
Ճանապարհդ թող հարթ լինի,
Բարիքներին արժան լինես,
Գնա՛, մեր ջան, դնա ըտրով,
Բարի օրհնութունդ ինձ թող՝
Գնա՛, մեր ջան, դնա ըտրով:

7(680). ՔՐՈՋ ՈՂԲԸ ԵՂԲՈՐ ՎՐԱ.

Լա՛յ, Լա՛յ, Լա՛յ, Լա՛յ,
Անաեւ ասնդ մաաաղ, Լա՛յ է՛,
Դոներդ ըաց ա մնացել,
Աչքդ տանդ վրա յա մնացել, Լա՛յ,
Բոյիդ մեռնեմ, ախպեր ջան,
Բալես, տատի, ախպեր չի ունենալու,
Քեռակին, աչքը ասն վրա յա մնացել,
Քեռու աչքը ասն վրա յա Լա՛յ է՛յ.
Տանողի վիղը թող կոտրվի,
Տանողի աչքը թող փշվի,
Լա՛յ, Լա՛յ, Լա՛յ է՛.
Իմ ախպեր դարիբութուն ա դնում,
Ադեն մաաաղ Լա՛յ է՛յ,
Քուրը դարիւր ախպոր ջանին մաաաղ,
Արած, դրած, կամաց դնացած ջանիդ
մաաաղ,
Արած դրած, դատարկ նստած ջանիդ
մաաաղ,
Լա՛յ հե՛յ,
Աշխարհից կուշա դնացած, ախպեր ջան,
Էրեխեքդ անաեւ են մնացել,
Դոներդ փակ ա մացել,
Դոներն ընկած, շուերն ընկած ջանիդ
մեռնեմ,
Ծարավ, սոված ջանիդ մեռնեմ:

8(681). ՔՐՈՅ ՈՂԲԸ ՔՐՈՋ ՎՐԱ.

Ա՛խ, անուշ ըալա ջան,
Բախտս էր չարա, սիրտս էր յարա,

Ես ո՛նց դիմացա,
Կումաշ կտրեմ, սուանց չափել,
Ես ի՞նչ անեմ դարտակ փլեր,
Վա՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ:
Անիրավ ըախտն ի՞նչ էր արեց,
Անամոթ թշնամին, դոներս քարեց,
Արունս պակասեց, սիրտս դադարեց,
Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, դա՛ռ ջան:
Եղանակն ամպեց քուր ջան
Տեկն ու կրակ քեց քեղի էրեց
Քուր ջան, քուր ջան վույ,
Կանչեցին, ըերեցին,
Ցավերու դեմ դարման չէրեցին,
Իմ քուր ջան, իմ մեր ջան:
Սրախ մեջ թողիւր անհնցնելի կրակ,
Թողիւր վառվելով, վառվելով,
Մշտական իսկի պես ծխելով,
Ծուխն էլ երեսիս մոտ տալով,
Քուր ջան, մեր ջան վո՛ւյ, վո՛ւյ:
— Ցավալի անձս, վշտալի դուլսս,
Քարին ես եմ խիել ով էր մեղավոր,
Իմ կյանքին տվել եմ վնաս,
Խավարեց աստղս, ես ինչպես էնեմ,
Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ,
Անշափ դժվար է, ի՞նչ էնեմ:
Բախտ կա՛ երկար, ըախտ կա խիստ կարճ,
Բախտ կա՛ դնում դեպի առաջ,
Բախտ կա՛ մանի դարնան կանաչ,
Իմ ըախտն էլ քար էր, ի՞նչ էնեմ,
Քուր ջան, ընչի՞ դառար լեռ քար:

9(682). ՈՂԲ

Ա՛խ ըալա ջան, ցավդ ասնեմ,
Բախտս էր դարա, սիրտս էր յարա,
Ես ինչպես անեմ,
Ա՛խ քուր ջան,
Իմ ասել, քու արցունք թափել,
Ղումաշ ասեմ առանց չափել,
Ես ի՞նչ անեմ, դարտակ փլեր,
Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ:
Տեսեք իմ անիրավ ըախտը ինչե՛ր արեց.
Վ՛անամոթ թշնամին,
Իմ դոներ քարեց
Վ՛արյունս պակասեց, սիրտս դադարեց,
Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ,
Վո՛ւյ դառ ջան, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ: